Հավելված՝
Հայաստանի Հանրապետության
Շիրակի մարզի Գյումրի համայնքի
ավագանու 2019 թվականի
փետրվարի 12-ի թիվ 11 -Ա որոշման

ԿԱՀՄՎԱԾ Է 2019ԹՎԱԿԱՆԻ
ՓԵՏՐՎԱՐԻ « 12 » - ԻՆ
ԲԱՂԿԱՑԱԾ Է 9 (ԻՆԸ) ԹԵՐԹԻՑ
ՏՊԱԳՐՎԱԾ Է ԸՆԴԱՄԵՆԸ 3 ՕՐԻՆԱԿ
ՕՐԻՆԱԿ 1

ՀԱՍՏԱՏՎԱԾ Է՝

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ
ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2019
ԹՎԱԿԱՆԻ ՓԵՏՐՎԱՐԻ « 12 » - Ի
ԹԻՎ 11 - Ա ՈՐՈՇՄԱՄԲ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝

_____ Ս. ԲԱԼԱՍԱՆՅԱՆ

ԳՐԱՆՑՎԱԾ Է՝

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ
ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ
ԱՆՁԱՆՑ ՊԵՏԱԿԱՆ ՌԵԳԻՍՏՐԻ
ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹՅԱՆ ԳՅՈՒՄՐՈՒ ՏԱՐԱԾՔԱՅԻՆ
ԲԱԺՆԻ ԿՈՂՄԻՑ 13.04.2005Թ.
ԳՐԱՆՑՄԱՆ N 29.21002130
ՀՎՀՀ 05532106
13.04.2005 ԹՎԱԿԱՆԻՆ ԳՐԱՆՑՎԱԾ
ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅԱՆ ԹԻՎ _____
ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆԸ ՆՈՐ ԽՄԲԱԳՐՈՒԹՅԱՄԲ
ԳՐԱՆՑՎԵԼ Է ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ
ՊԵՏԱԿԱՆ ՌԵԳԻՍՏՐԻ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹՅԱՆ
ԿՈՂՄԻՑ

«____» _____2019 Թ.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ «ՄԱՐԻԱՄ ԵՎ ԵՐԱՆՈՒՀԻ ԱՍԼԱՄԱԶՅԱՆ ՔՈՒՅՐԵՐԻ ՊԱՏԿԵՐԱՍՐԱՀ» ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ

ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆ

(ՆՈՐ ԽՄԲԱԳՐՈՒԹՅԱՄԲ)

Ք. ԳՅՈՒՄՐԻ 2019 ԹՎԱԿԱՆ

I. Ընդհանուր դրույթներ

1. Հայաստանի Հանրապետության Շիրակի Մարզի Գյումրի համայնքի «Մարիամ և Երանուհի Ասլամազյան քույրերի պատկերասրահ» համայնքային ոչ առևտրային կազմակերպությունը (այսուհետ՝ կազմակերպություն) շահույթ ստանալու նպատակ չհետապնդող, իրավաբանական անձի կարգավիճակ ունեցող ոչ առևտրային կազմակերպություն է, որը իրականացնում է մշակութային, գիտակրթական, դաստիարակչական ծրագրեր:

2. Կազմակերպությունը հանդիսանում է Հայաստանի Հանրապետության Գյումրու քաղաքային համայնքի «Երանուհի և Մարիամ Ասլամազյան քույրերի պատկերասրահ» համայնքային ոչ առևտրային կազմակերպության (գրանցման համարը՝ 29.21002130, վկայական N03Ա067339) իրավահաջորդը: Կազմակերպության հիմնադիրը Հայաստանի Հանրապետության Գյումրի համայնքն է (այսուհետ՝ Հիմնադիր), որի անունից հանդես են գալիս Գյումրի համայնքի ավագանին և համայնքի ղեկավարը:

3. Կազմակերպության իրավաբանական հասցեն (գտնվելու վայրը)՝ քաղաք Գյումրի, Աբովյան 232, փոստային ինդեքս՝ 3104:

4. Կազմակերպությունը ստեղծված է համարվում Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով պետական գրանցման պահից, նրա գործունեությունը կարգավորվում է Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ, Հիմնադրի որոշումներով, Հայաստանի Հանրապետության կողմից վավերացված միջազգային պայմանագրերով և սույն կանոնադրությամբ:

5. Կազմակերպությունը, որպես սեփականություն, ունի առանձնացված գույք և իր պարտավորությունների համար պատասխանատու է այդ գույքով: Կազմակերպությունը կարող է իր անունից ձեռք բերել և իրականացնել գույքային և անձնական ոչ գույքային իրավունքներ, կրել պարտականություններ, դատարանում հանդես գալ որպես հայցվոր կամ պատասխանող:

6. Կազմակերպությունը այլ կազմակերպության Հիմնադիր կամ մասնակից կարող է հանդիսանալ միայն Հիմնադրի որոշմամբ:

7. Կազմակերպությունը ունի Հայաստանի Հանրապետության զինանշանի պատկերով և իր անվամբ կլոր կնիք ու դրոշմակնիք, ձևաթղթեր, խորհրդանիշ, անհատականացման այլ միջոցներ:

8. Կազմակերպությունն ունի ինքնուրույն հաշվեկշիռ, հաշվարկային հաշիվ բանկերում:

9. Կազմակերպությունը կարող է ունենալ հիմնարկներ, մասնաճյուղեր, որոնք ստեղծվում են Հիմնադրի որոշմամբ և օրենքով սահմանված կարգով ենթակա են հաշվառման իրավաբանական անձանց գրանցումն իրականացնող մարմնի կողմից:

10. Կազմակերպությունն իր պարտականությունների համար պատասխանատու է իրեն պատկանող գույքով:

Հիմնադիրը պատասխանատվություն չի կրում կազմակերպության պարտավորությունների, իսկ կազմակերպությունը՝ հիմնադրի պարտավորությունների համար:

Հիմնադիրը պատասխանատվություն է կրում մինչև կազմակերպության պետական գրանցումը ծագած՝ կազմակերպության հետ կապված պարտավորությունների համար:

11. Կազմակերպության անվանումն է՝

հայերեն լրիվ՝ «Մարիամ և Երանուհի Ասլամազյան քույրերի պատկերասրահ» համայնքային ոչ առևտրային կազմակերպություն
կրճատ՝ «Մարիամ և Երանուհի Ասլամազյան քույրերի պատկերասրահ»
ռուսերեն լրիվ՝ «Галерея сестер Мариам и Ерануи Асламазян» общинная некоммерческая организация
կրճատ՝ «Галерея сестер Мариам и Ерануи Асламазян»
անգլերեն լրիվ՝ «The Gallery of Mariam and Eranuhi Aslamazyan Sisters» Non commercial Municipality Organization
կրճատ՝ «The Gallery of Mariam and Eranuhi Aslamazyan Sisters»

II. **Կազմակերպության գործունեության առարկան և նպատակները**

12. Կազմակերպության գործունեության առարկան և նպատակներն են՝ Ասլամազյան քույրերի արվեստը ներկայացնող թանգարանային առարկաների և թանգարանային հավաքածուների պահպանումը, հայտնաբերումն ու հավաքումը, ուսումնասիրումը, հանրահռչակումը, գիտական ուսումնասիրություններ կատարելը:

Կազմակերպության գործունեության նպատակներին համապատասխան.

1) իրականացնում է կազմակերպությանն ամրացված թանգարանային առարկաների և թանգարանային հավաքածուների ֆիզիկական պահպանվածությունն ու անվտանգությունն ապահովող միջոցառումներ, այդ թվում՝ թանգարանային առարկաների կոնսերվացումը և վերականգնումը,
2) իրականացնում է թանգարանային հավաքածուների համալրում՝ նվիրաբերումների, կտակի, հանձնման, գնման եղանակներով,
3) իրականացնում է կազմակերպությանն ամրացված (մշտական կամ ժամանակավոր պահպանության), ինչպես նաև՝ համալրման նպատակով ձեռքբերված թանգարանային առարկաների և թանգարանային հավաքածուների հաշվառում,
4) կազմակերպում է թանգարանի մշտական և ժամանակավոր ցուցադրություններ,
5) կազմակերպում է ցուցահանդեսներ կազմակերպությանն ամրացված, նաև իրավաբանական և ֆիզիկական անձանց պատկանող թանգարանային առարկաներով և թանգարանային հավաքածուներով,
6) ապահովում է կազմակերպությանն ամրացված թանգարանային առարկաների և թանգարանային հավաքածուների մատչելիությունը,
7) իրականացնում է գիտալուսավորչական աշխատանք, կազմակերպում է դասախոսություններ, համաժողովներ,
8) իրականացնում է գիտահետազոտական աշխատանք,
9) պատրաստում է ուղեցույցներ, կատալոգներ, ինչպես նաև կազմակերպության գործունեության վերաբերյալ տեղեկատվական ու գովազդային նյութեր,
10) համագործակցում է Հայաստանի Հանրապետության և օտարերկրյա թանգարանների հետ՝ թանգարանային գործի պետական ու գիտագործնական խնդիրների վերաբերյալ համատեղ ծրագրերի մշակման իրականացման նպատակով,
11) կազմում և Հիմնադրի հաստատմանն է ներկայացնում կազմակերպության

տնտեսական զարգացման ծրագիրը, մշտական ցուցադրության այցելության մուտքավճարի չափը, մշտական ցուցադրության (էքսկուրսիաների), թանգարանի ծառայությունների մատուցման կարգն ու սակագները,

12) ապահովում է կազմակերպության ամրացված շենքի պահպանությանն ու օգտագործմանն անհրաժեշտ պայմանակարգը (ռեժիմը), իրականացնում է հակահրդեհային անվտանգության միջոցառումներ:

13. Կազմակերպությունն Հիմնադրի որոշմամբ իրականացնում է ձեռնարկատիրական և կազմակերպչական գործունեության հետևյալ տեսակները՝

1) հրատարակչական գործունեություն,
2) հուշանվերների պատրաստում և իրացում,
3) ակումբների, միությունների ստեղծում,
4) պատկերասրահի հուշանվերների խանութի գործունեություն՝ հուշանվերների վաճառք,
5) ժամանակավոր ցուցահանդեսների և նախագծերի համար ցուցասրահների և տարածքների վարձակալության տրամադրում:

Լիցենզավորման ենթակա գործունեության տեսակներով կազմակերպությունը կարող է զբաղվել միայն լիցենզիայի հիման վրա:

14. Կազմակերպության գործունեության ընթացքում առաջացած շահույթն օգտագործվում է սույն կանոնադրությամբ նախատեսված նպատակների իրականացման համար: Կազմակերպության ընթացքում շահույթի օգտագործման կարգը սահմանում է Հիմնադիրը:

15. Համայնքային բյուջեով կազմակերպության համար ուղղակի նախատեսված միջոցների սահմաններում կազմակերպության կողմից համայնքին և (կամ) պետությանը մատուցվող ծառայությունների, աշխատանքների և ապրանքների գնումն իրականացվում է մեկ աղբյուրից գնումների կատարման ձևով: Կազմակերպության կողմից համայնքին և (կամ) պետությանը այլ ծառայություններ, աշխատանքներ կարող են մատուցվել կամ ապրանքներ իրացվել միայն «Գնումների մասին» ՀՀ օրենքով նախատեսված կարգով:

Կազմակերպությունը հարկերը, տուրքերը և պարտադիր այլ վճարները վճարում է շահույթ ստանալու նպատակ չհետապնդող կազմակերպությունների համար նախատեսված կարգով ու չափով:

III. **Կազմակերպության սեփականությունը**

16. Կազմակերպության սեփականությունը ձևավորվում է կազմակերպության հիմնադրման ժամանակ և հետագայում Հիմնադրի կողմից սեփականության իրավունքով նրան հանձնվող, ինչպես նաև կազմակերպության գործունեության ընթացքում արտադրված ու ձեռք բերված գույքից:

Կազմակերպության գույքի ձևավորման աղբյուր կարող են հանդիսանալ նաև Հայաստանի Հանրապետության և օտարերկրյա պետությունների իրավաբանական և ֆիզիկական անձանց կատարած ներդրումները, այդ թվում՝ բարեգործական, հովանավորչական, նպատակային նվիրատվություններն ու հատկացումները:

17. Կազմակերպությունն իրավունք ունի օրենքին, Հիմնադրի որոշումներին և (կամ) սույն կանոնադրությանը համապատասխան՝ իր հայեցողությամբ տիրապետել, տնօրինել և օգտագործել սեփականության իրավունքով իրեն պատկանող գույքը:

18. Կազմակերպության սեփականության իրավունքով պատկանող գույքի նկատմամբ Հիմնադիրը չունի իրավունքներ, բացառությամբ կազմակերպության լուծարումից հետո մնացած գույքի:

19. Կազմակերպության սեփականության պահպանման հոգսը կրում է կազմակերպությունը:

20. Կազմակերպության սեփականության վրա կարող է բռնագանձում տարածվել միայն դատական կարգով:

21. Կազմակերպության ֆինանսական հաշվետվությունների արժանահավատությունը ենթակա է վերստուգման (աուդիտի) համայնքապետարանի ներքին աուդիտի բաժնի կողմից:

IV . Կազմակերպությանն ամրացված գույքը և պատմամշակութային արժեքները

22. Հիմնադրի որոշմամբ կազմակերպությանը անժամկետ ու անհատույց օգտագործման իրավունքով ամրացվում է ցանկացած գույք:

23. Հիմնադիրն իրավունք ունի հետ վերցնել իր կողմից կազմակերպությանը ամրացված գույքը:

24. Կազմակերպությունն իրավունք չունի ամրացված գույքի կամ դրա նկատմամբ իր իրավունքները օտարել, գրավ դնել, հանձնել անհատույց օգտագործման:

25. Կազմակերպությունն իրավունք ունի իրեն ամրացված գույքը հանձնել վարձակալության, եթե դա արգելված չէ Հիմնադրի որոշմամբ: Ամրացված գույքի օգտագործման արդյունքում կազմակերպության ստացած եկամուտները կազմակերպության սեփականությունն են:

Կազմակերպությանն ամրացված գույքի օգտագործման ընթացքում առաջացած անբաժանելի բարելավումները Հիմնադրի սեփականությունն են:

26. Կազմակերպությունն իրավունք չունի օտարել, գրավ դնել, հանձնել վարձակալության կազմակերպությանն ամրացված թանգարանային առարկները և թանգարանային հավաքածուները:

Կազմակերպությանն ամրացված թանգարանային առարկաների և թանգարանային հավաքածուների մշտական կամ ժամանակավոր պահպանության հանձնումը մեկ այլ իրավաբանական անձի իրականացվում է Հիմնադրի կողմից լիազորված պետական մարմնի որոշմամբ և սահմանված կարգով:

Կազմակերպությանն ամրացված թանգարանային առարկայի դուրսգրումը պետական հաշվառման գրանցամատյաններից իրականացվում է դրա քայքայման կամ ոչնչացման դեպքում՝ Հիմնադրի կողմից լիազորված պետական մարմնի որոշմամբ և սահմանված կարգով:

27. Հիմնադիրը, Հիմնադրի կողմից նախատեսված դեպքում լիազորված պետական մարմինն իրավունք ունի ստուգելու կազմակերպությանն ամրացված թանգարանային առարկաների և թանգարանային հավաքածուների ամբողջականությունն ու պահպանվածությունը՝ դրանց փաստացի առկայության և պետական հաշվառման փաստաթղթերի հետ համեմատության միջոցով:

V. Կազմակերպության կառավարումը

28. Կազմակերպության կառավարումն իրականացվում է Հիմնադրի և կազմակերպության տնօրենի կողմից: Կազմակերպության տնօրենին պաշտոնի նշանակում և պաշտոնից ազատում է համայնքի ղեկավարը:

29. Կազմակերպության Հիմնադիրն ունի հաստատության գործունեությանը և կառավարմանը վերաբերվող ցանկացած հարց վերջնական լուծելու իրավունք՝ բացառությամբ օրենքով նախատեսված դեպքերի:

30. Կազմակերպության Հիմնադրի բացառիկ լիազորություններն են՝

1) կազմակերպության հիմնադրումը,
2) կազմակերպության կառուցվածքի ու հաստիքային ցուցակի հաստատումը,
3) կազմակերպության գործունեության առարկայի և նպատակների, այդ թվում նրա կողմից իրականացվող գործունեության տեսակների սահմանումը,
4) կազմակերպության կանոնադրության հաստատումը և դրանում փոփոխությունների կատարումը,
5) կազմակերպության վերակազմակերպումը և լուծարումը,
6) Հիմնադրի որոշմամբ և սույն կանոնադրությամբ նախատեսված այլ հարցերի լուծումը:

31. Հիմնադիրը՝

1) կազմակերպության կանոնադրությամբ սահմանված կարգով իրականացնում է նրա կառավարման մարմինների ձևավորումը և նրանց լիազորությունների վաղաժամկետ դադարեցումը,
2) վերահսկողություն է իրականացնում կազմակերպության գործունեության նկատմամբ,
3) կասեցնում կամ ուժը կորցրած է ճանաչում կազմակերպության տնօրենի հրամանները, հրահանգները, կարգադրություններն ու ցուցումները,
4) լսում է կազմակերպության գործունեության մասին հաշվետվություններ, քննում դրա գործունեության վերստուգման արդյունքները,
5) վերահսկողություն է իրականացնում կազմակերպության գույքի օգտագործման և պահպանության նկատմամբ, իսկ օրենքով Հիմնադրի որոշմամբ կամ կազմակերպության կանոնադրությամբ նախատեսված դեպքերում համաձայնություն է տալիս իր գույքի օտարման կամ վարձակալության հանձման համար,
6) հաստատում է կազմակերպության տարեկան հաշվետվությունները և տարեկան հաշվեկշիռը,
7) հաստատում է կազմակերպության տարեկան ծախսերի նախահաշիվը,
8) իրականացնում է օրենքով Հիմնադրի որոշումներով և կազմակերպության կանոնադրությամբ նախատեսված այլ գործառույթներ:

32. Կազմակերպության տնօրենն իրականացնում է կազմակերպության ընթացիկ գործունեության ղեկավարումը: Տնօրենն օրենքով, Հիմնադրի որոշումներով, սույն կանոնադրությամբ և իրեն վերապահված լիազորությունների սահմաններում ղեկավարում է կազմակերպության գործունեությունն ու կրում պատասխանատվություն օրենքների, այլ իրավական ակտերի, Հիմնադրի որոշումների, սույն կանոնադրության և կնքած պայմանագրերի պահանջները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար:

33. Կազմակերպության տնօրենը՝

1) առանց լիազորագրի հանդես է գալիս կազմակերպության անունից, ներկայացնում նրա շահերը և կնքում գործարքներ,
2) Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ, Հիմնադրի որոշմամբ ու սույն կանոնադրությամբ սահմանված կարգով տնօրինում է կազմակերպության գույքը, այդ թվում՝ ֆինանսական միջոցները,
3) տալիս է կազմակերպության անունից հանդես գալու լիազորագրեր, այդ թվում՝ վերալիազորագրման իրավունքով,
4) աշխատանքի նշանակում ու աշխատանքից ազատում է կազմակերպության աշխատողներին, նրանց նկատմամբ կիրառում խրախուսման միջոցներ և նշանակում կարգապահական տույժեր,
5) բանկերում բացում է հաշվարկային հաշիվներ,
6) սահմանում է կազմակերպության կառուցվածքն ու կառուցվածքային ստորաբաժանումների իրավասությունները,
7) օրենքով և սույն կանոնադրությամբ սահմանված իր լիազորությունների սահմաններում արձակում է հրամաններ, հրահանգներ, տալիս պարտադիր կատարման համար ցուցումներ և վերահսկում դրանց կատարումը,
8) իրականացնում է կադրերի ճիշտ ընտրություն և անհրաժեշտ պայմաններ ստեղծում նրանց մասնագիտական մակարդակի բարձրացման համար,
9) վերահսկողություն է իրականացնում կազմակերպության աշխատողների կողմից իրենց աշխատանքային պարտականությունների կատարման նկատմամբ,
10) իր հրամանով հաստատում է կազմակերպության ներքին կարգապահական կանոնները,
11) ապահովում է աշխատանքային կարգապահական ներքին կանոնների, աշխատանքի պաշտպանության և անվտանգության տեխնիկայի պահպանումը,
12) կազմում է կազմակերպության հաստիքային ցուցակն ու ծախսերի նախահաշիվը և դրանք ներկայացնում Հիմնադրի հաստատմանը,
13) իրականացնում է Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը չհակասող կազմակերպության կառավարման մյուս մարմիններին չվերապահված այլ լիազորություններ:

34. Կազմակերպության տնօրենի բացակայության դեպքում, համայնքի ղեկավարի գրավոր որոշման համաձայն տնօրենի լիազորություններն իրականացնում է այլ անձ:

VI. Կազմակերպության սեփականությունը, նրան ամրացված գույքը և ֆինանսական գործունեությունը

35. Կազմակերպության սեփականությունը ձևավորվում է կազմակերպության հիմնադրման ժամանակ և հետագայում Հիմնադրի կողմից սեփականության իրավունքով նրան հանձնվող, ինչպես նաև կազմակերպության գործունեության ընթացքում արտադրված և ձեռք բերված գույքից:

36. Կազմակերպությունն իրավունք ունի օրենքին, Հիմնադրի որոշումներին և (կամ) իր կանոնադրությանը համապատասխան իր հայեցողությամբ տիրապետելու, տնօրինելու և օգտագործելու սեփականության իրավունքով իրեն պատկանող գույքը:

37. Հիմնադրի կողմից կազմակերպությանը օգտագործման հանձնված գույքի պահպանման հոգսը կրում է կազմակերպությունը:

38. Հիմնադրի կողմից կազմակերպությանը հանձնված գույքի օգտագործման արդյունքում ստացած եկամուտները կազմակերպության սեփականությունն են, իսկ անբաժանելի բարելավումները Հիմնադրի սեփականությունն են:

39. Կազմակերպության սեփականության վրա կարող է բռնագանձում տարածվել միայն դատական կարգով:

40. Կազմակերպության ֆինանսատնտեսական գործունեությունը, նյութատեխնիկական բազան՝

1) կազմակերպության ֆինանսավորումը համայնքի բյուջեից կատարվում է ըստ իրականացվող ծրագրերի
2) կազմակերպության լրացուցիչ միջոցներն են՝

   ա. տնտեսական գործունեությունից և աշխատողների թողարկած արտադրանքի իրացումից ստացված եկամուտը.

   բ. պետական, համայնքային և ոչ պետական կազմակերպություններից, հիմնադրամներից և այլ հիմնարկներից, ձեռնարկություններից ու կազմակերպություններից, ինչպես նաև առանձին քաղաքացիներից հատկացվող նյութական արժեքները, դրամական միջոցները և կամավոր ներդրումները:

41. Հաշվապահական և վիճակագրական հաշվառման կարգը սահմանվում է ՀՀ օրենսդրությամբ:

42. Կազմակերպության ֆինանսավորման լրացուցիչ աղբյուրներն են՝

1) սահմանված կարգով վճարովի կրթադաստիարակչական ծառայությունների մատուցումից ստացված միջոցները,
2) բարեգործական հատկացումները, նպատակային ներդրումները, Հայաստանի Հանրապետության և օտարերկրյա կազմակերպությունների ու քաղաքացիների նվիրատվությունը և դրամաշնորհները:

43. Կազմակերպության հիմնական գործունեության հարցերի քննարկման, մասնագիտական կազմակեպչական աշխատանքների արդյունավետ իրականացման նպատակով տնօրենին առընթեր ստեղծվում են խորհրդակցական մարմիններ՝

1) գիտական խորհուրդ,
2) թանգարանային հավաքածուի գնման հանձնաժողով:

Կազմակերպության խորհրդակցական մարմիններն իրենց գործառույթներն իրականացնում են իրենց կանոնակարգերի հիման վրա:

Կազմակերպության խորհրդակցական մարմինների կազմում կարող են ընդգրկվել կազմակերպության մասնագետներ, այլ կազմակերպությունների ներկայացուցիչներ:

Կազմակերպության խորհրդակցական մարմինների կազմը և կանոնակարգերը հաստատում է կազմակերպության տնօրենը՝ համաձայնեցնելով համայնքի ղեկավարի հետ:

Կազմակերպության խորհրդակցական մարմինների որոշումներն իրականացվում են կազմակերպության տնօրենի հրամանով:

VII. **Կազմակերպության վերակազմավորումը և լուծարումը**

44. Կազմակերպությունը կարող է վերակազմակերպվել Հիմնադրի որոշմամբ, Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքով սահմանված կարգով, նաև ՀՀ օրենսդրությամբ սահմանված օրենքներով և կարգով:

45. Կազմակերպությունը դատական կարգով կարող է վերակազմակերպվել օրենքով սահմանված դեպքերում և կարգով:

46. Կազմակերպության լուծարմամբ նրա գործունեությունը դադարում է առանց իրավունքները և պարտականությունները իրավահաջորդության կարգով այլ անձանց անցնելու:

47. Կազմակերպությունը կարող է լուծարվել Հիմնադրի որոշմամբ Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքով սահմանված կարգով:

48. Կազմակերպությունը դատական կարգով կարող է լուծարվել միայն օրենքով սահմանված կարգով: